

Թեև ադրեն ու եւրոպացիներուն աչքերը կրնան անհաճոյ
զգայնութիւններով տպաւորել, խուրճ-խուրճ պէսերով,
ցուլի բառաչով, որոնց պարզ երեւումը գեղջուկ թաղի
մը մոտքին՝ բաւ էր դռնառաջները պարպելու, ակնթար-
թի մէջ, արդարէն ու մեղաւորէն, մանուկէն ու ծերէն:

Հրա՞ջք մը, Աստուծոյ անհաս ճամբաներէն, այս
տեսակ գեղի մը մէջ, գոյութիւնը չէն սա օճախին, գիւ-
ղապետին երիտասարդ մանչովը անգամ մըն ալ ուշքի
ելած, նոյնիսկ ջարդերէն վերջ: Ժողովուրդը իր գէշ կամ
քիչ հասկցած բաները այսպէս կը ջանայ բերել իր խելքի
փլաւին: Հրաջքը անշուշտ կարծիքն էր տէրտէրին, ա՛ն
ալ մէկ հատիկ, պարզ ու քաջասիրտ հողագործ, որ առ-
տու-իրիկուն ժամը կ'ընէր, կը վազէր պարտէզ, դռում-
ները ջրելու, միշտ զարմանալով Ամենակալին իմաստու-
թեան, որ չէր աչքէ հեռու պահած իր ալ գեղը, արտօնելով
հոն բարգաւաճ գոյութիւնը փարթամ օճախին: Ան, իր
նախորդէն, մեռած հարիւրամեայ, որմէ եօթանասունը
տէրտէրութեան մէջ, ժառանգած էր այդ տաճուտէր ըն-
տանիքին համար նոյն աւանդութիւնը, այս անգամ՝ ա՛լ
հաստատ, անսխալ իրականութիւն: Աստուծոյ աջը հո-
վանի կ'ընէր այդ տունին: Անոր մօտ երկու հեղ յիսուն
համրած գլուխը կը յիշէր բարբարոսութեան ու կրակի
մեծ հանդէսները, որոնք թուրքերուն կանխող երկու դա-
րերը ըրած են տակնուվրայ, զարկած էին այդ խուլ գեղն
ալ, բայց միշտ ալ խնայած օճախին, որուն հիմնադիրը
աստուածատես արդար մը կ'ըլլար ծերունի քահանային
բերնին, - թարթիչի հաստութեամբ անգամ չչեղած Երկ-
նաւորին ուղիէն: «Որ ոչ գնայ ի ճանապարհս ամբարըշ-
տաց», կ'ըսէր իմ օրերուս, տէրտէրը, թաքուն հակառա-
կորդ գիւղապետին, բայց շիտակը խօսելու մէջ ալ եռան-
դոտ ու արի: Հեքիաթ մը հիմնելու տունին նախկինները
կը հանէր շատ վար, ժամանակը դէպի իջնալու մէջ հաճոյք
ունեցող ու սկզբնական օճախին հիմը փորուած պահուն
երեւան կը բերէր գուր մը, մարդու հասակով, պարունա-
կութիւնը՝ հարկ չկայ ճշդելու... ոսկի, պահ դրուած մին-